ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ մշակույթի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի ապրիլի 4-ին կնքված N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» պայմանագրում 2018 թվականի ապրիլի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 Պայմանագրով տրամադրվող կանխավճարի չափով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարել պայմանագրի N 3 «Վճարման ժամանակացույց» հավելվածում:

Փոփոխության նկարագրություն Պայմանագրի N 3 «Վճարման ժամանակացույց» հավելվածում «ապրիլ» և «մայիս» ամիսներին վճարվող գումարի չափի փոփոխություն:

Փոփոխության հիմնավորում ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6)-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «26» ապրիլ 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «Շինարար-97» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հովհաննես Ահարոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի ապրիլի 4-ին կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1.1 և 8.5 կետերը և ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6)-րդ ենթակետը՝ Պատվիրատուն և Կապալառուն համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.Դ Պայմանագրի N 3 «Վճարման ժամանակացույց» հավելվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 3 (երեք) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ մշակույթի նախարարություն	«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Տեքստիլագործների 29/36
Կառավարական շենք N 2,	էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ (011) 58-51-78	հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011018919	ՀՎՀՀ 05510886,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	հ/հ 205012200981
գործառնական վարչությունում	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Ս. Մուրադյան	Հ. Ահարոնյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված

«26» մարտի 2018 թ. կնքված
N 1 համաձայնագրի

Հավելված թիվ 3

« 4 » 04 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/02-2» *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45451600/9	ՀՀ Շիրակի մարզի Հոռոմ համայնքի Սբ Հռիփսիմե եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ	0	0	0	3000000	3000000	3000000	5409300	7854600	10374000	11856000	13338000	14820000	**14820000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011018919
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար

(ստորագրություն) **Ս. Մուրադյան**

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Տեքստիլագործների 29/36
էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 05510886,
հ/հ 20501220098 1
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ

Տնօրեն՝

(ստորագրություն) **Հ. Ահարոնյան**

Կ.Տ